դեհեն հետո տպարանի թրքական տառերու կաղապարները կը փոխանցվին Ծովային նախարարության։ Արապյան տպարանի գործունեության ընթացքին տպված ու հրատարակված են մոտ 150 թերթեր ու ամսագրեր, ինչպես նաև գիրքեր։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ—Երաժիշտ, փորագրիչ, ոսկերիչ, տպարանատեր և գրաձուլիչ։ 1810 թվականին ծնած է Կ. Պոլսո Սամաթիա արվարձանը և մեռած է 17 նոյեմբեր 1891-ին։ Որդին է սուլթան Մահմուդ Բ-ի արքունի ճարտարապետ Գրիգոր Պալյանի օգնականներեն երկրաչափ Գեորգի։ Նախնական ուսումը կ'ստանա Սամաթիայի հայկական վարժարանը։ Գեղաձայն ըլլալուն համար փոքր տարիքեն կ'սկսի երգել Գուզկունճուքի հայկական եկեղեցիին մեջ։ Կը սորվի եկեղեցական երաժշտություն և նոթա։ Դաշնամուրի դասեր կ'առնե իտալացիե մը։ 15 տարեկանին կը մտնե ոսկերիչի մը քով և կարճ ատեն մը վերջ կը տիրապետե արհեստին բոլոր նրբություններուն ու գործատիրոջը գործընկեր կը դառնա։ Միջոց մը կ'աշխատի Պետական օրացույցի արհեստանոցը (1831), սակայն աշխատավարձի անբավարարության պատճառով կը հեռանա հոնկե և Զուխաճի Խանին մեջ կը զբաղի ադամանդ ու գոհարեղեններ հղկելով և շատ չանցած կը դառնա ոսկերչապետ՝ ամիրաներու և աշքառու հայ ընտանիքներու։ Ավելի հետո կը սկսի մոտիկեն հետևիլ տառաձուլման և տպարանային արհեստին և արքունի ճարտարապետ Հովհաննես Սերվերյանի քաջալերության և նյութական օժանդակության շնորհիվ Սկյուտարի մեջ կը հիմնե տպարան մը (1839)։ Այստեղ կը պատրաստե հայկական տառերու 8 համարի տպատառերը (շրիֆտները)։ Նույն միջոցին իրենց հանձնված ճեմարան վարժարանի տպարանին մեջ հարյուր հազար օրինակով կը տպագրե 1840 թվականի հայկական օրացույցը (նոյեմբեր 1839)։ 1842-ին, երբ օսմաններեն «թա'ալիք» գիրերու ձուլման և պատրաստության գործն իրեն կը հանձնվի և Պետական արհեստանոցի տնօրեն կը կարգվի, իր տպարանը կը փոխադրե Զուքուր Չեշմե խանը և հոն իր ձուլած տառերով կը շարե և կը տպե (Ռիսալեի Իթիքատիե»-ն (Գիրք հավատարմության)։

Ռաֆայել Գաղանճյանեն վերջ Մյուհենտիսյանը Ամերիկայեն բերած մեքենաներով և այլ կազմածներով բարեկորոգած իր տպարանին մեջ տպեց 5000, 1000, 500, 250 ղրուշնոց տոկոսաբեր (ֆայիզլի) թղթադրամները (1844)։ Նույն տարին Պետական տպարանին մեջ իր իրագործած հղկված «թա'ալիք» տառերուն համար 10000 ղրուշով պարգևատրված ըլլալուն մասին փաստաթուղթեր կան պետական արխիվ-